— Ա՛խ, ի՞նչ լաւ էր Սալմաստը, Ֆարհատ, այն այգիները, այն պարտէզ-ները... Այստեղ, այս սարերի մէջ մանր թուփերից աւելի ոչինչ չես տեսնի: Ա՛խ, ի՞նչ լաւ էր այնտեղ:

— Օ՛հ, ես իստակ մոռացայ քո նախաճաշիկը... — ասաց նա եւ վազեց դէպի մերձակայ սենեակը:

Ես մտայ քնարանը, որ միեւնոյն ժամանակ տանուտիրոջ հիւրանոցն էր: Խաթունը, ծերունի որսորդի տնակալուչ պառաւը, արդէն հաւաքել էր իմ քնաշորերը եւ սենեակը սարքել էր: Պառաւի հնացած աչքերը չկարողացան ճանաչել ինձ. նա խիստ կարճատես կերպով նայեց իմ երեսին, ինչ-որ փնթփնթաց քթի տակից, եւ դողդոջուն քայլերով դուրս գնաց:

Քանի րոպէից յետոյ, փոքրիկ փայտեայ մատուցարանի վրայ դրած, Մարօն ներս բերաւ իմ նախաճաշիկը, որ բաղկանում էր սէրից խառն մեղրի հետ. ես սկսեցի ուտել սպիտակ լաւաշներով: Մարօն կանգնած էր իմ մօտ եւ պտտեցնում էր իւր «թեշին»: Կարծես, այն գեղեցիկ մատները չէին սովորել անգործ մնալ:

— Ֆարհատ, դու շուտով չես գնայ մեր տանից. այդպէս չէ՞, — հարցրեց նա շարունակելով «թեշինէ պտտեցնելը: — Ինչ՛ վատ բուրդ է, սատանան տանէ, որքան աշխատում ես բարակ մանել, գլուխ չէ գալիս:

— Դու ուզո՞ւմ ես, ձեզ մօտ մնամ:

— Ինչո՞ւ չեմ ուզում: Բայց այստեղ լաւ չէ գիւղումը. ես հայրիկին կ'ասեմ մեզ տանէ «օբանէ, այնտեղ լաւ է, շա՛տ լաւ է չադրների մէջ: Առաւօտեան վեր ես կենում, մտիկ ես տալիս չորս կողմդ, ամէն տեղ կանաչ է, ծաղիկները վառւում են ուլունքների նման, գառները, ոչխարները թրթռում են դէպի արօտները...:

Սոյն միջոցին յայտնոեցաւ Մըհէի վիթխարի կերպարանքը, նա կիսով չափ կռանալով, անցաւ դռնից եւ կանգնելով շեմքի մօտ, ասաց.

— Ձին հազիր է, — եւ ծուռը կերպով նայելով Մարոյի երեսին, դուրս գնաց:

Ես հրացանս քաշ տալով ուսիցս, պատրաստոեցայ ճանապարհ ընկ-նել:

— Դու ճանապարհն իմանում ե՞ս, — հարցրեց Մարօն:

— Չեմ իմանում, բայց կը գտնեմ:

— Դժոար է: Ես քեզ կը հասցնեմ մինչեւ «Ծակ-քարը», այնտեղից ուղիղ ճանապարհ կայ մինչեւ Խանա-սորի ձորը: